

գումարով, ոչ ապաքէն նորա են միակ հաստատուն ազրիւրներն նաեւ մեր ծխական դպրոցաց, որոց մէջ պէտքէ կրթութիւն եւ ուսանին ազգի մանուկները:

Արդեօք երբ պէտքէ մեր ժողովուրդը հասկանայ մեր Եկեղեցական Վարչութեան ժողովրդական համերաշխ ուղղութիւնը եւ փոխադարձ պարտաւորութիւնքը, եւ կարողանայ ըստ արժանւոյն զնահատել եւ յօգուտ իւր գործածել իւր ձեռքին ունեցած այն իրաւունքները, որոնք օտար ազգաց ժողովուրդքը նոր են ջանք անում՝ ձեռք բերել մեծամեծ գոռարութիւններով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի ԽՄԵԱԳՐՈՒԹԵՆԷ՛ Ե՝ ԱՐԱՐԱՏ, ԱՄՍԱԳՐՈՅՍ.

Առաջիկայ Դեկտեմբեր ամսում՝ «ԱՐԱՐԱՏ» ամսագրոյս Հնգետասաներորդ շրջանը լրանալով 1883 թուականի Յունվարից պէտքէ Վեշտասաներորդ (ՓԶ.) շրջանն սկսի:

Ուստի խնդրումք մեր Գործակալներից, որ փութան մինչեւ ներկայ տարւոյս Դեկտեմբերի 15ը ծանուցանել Տպ. ժողովոյն «ԱՐԱՐԱՏ» ին բաժանորդագրուիլ ցանկացողաց անունները ճիշտ հասցէներով:

Մեծայոյս եմք, որ մեր սիրելի Ազգայինք, ինչպէս մինչեւ ցարդ համակրած են «Արարատ» ամսագրոյս եւ իւրեանց խրախուսանքը չեն զլացած, նոյնպէս կ'փութան յառաջակայում եւ միշտ միեւնոյն զգացմամբք բաժանորդագրուիլ եւ օգնել սմին:

Արարատի թերթից քանակութիւնը, ուղղութիւնն ու բովանդակութեանց ծրագիրը եւ տարեկան բաժանորդագինը միեւնոյն կ'մնան: